«Գերման ապահովագրական գործողութիւնք շատ տարիներէ ի վեր խիստ վնասուած են Անգլիացւոց կռուոյն մրցումէն, բայց յայտնի է թէ անգլիական բաժիններուն սակերը աժան են, և աւելի գերման մեծ տուները իրենց ապահովագրութիւնները Անգլիացւոց ձեռքով կատարելով, բնական է որ նկատի կ'առնեն մէն մի մարքի խնայողութիւնը։ Սակայն առոր հակառակ, գերման ապահովագրութիւնը սա՛ առաւելութիւնը ունի որ պատերազմ ալ ծագի երկու երկիրներուն մէջ, միշտ ապահով կ'ընէ իր յաճախորդը։»

Այս յօդուածը Գերմանիոյ մէջ մեծ արձագանգ գտաւ և անգլիական ընկերութիւնք վնասելու երկիւղի մէջ են։ Այս պատճառաւ, Լոնտոնի հրդեհի մեծ ընկերութիւնները յայտարարեցին իսկոյն թէ այդ երկիւղները անհիմն են։ Եւրոպայի մէջ մեծ գործ տեսնող Սըն ապահովագրական ընկերութեան տնօրէնը յայտարարեց թէ ակնարկուած պարագաներուն մէջ երբեք չենք մերժեր մեր պայմանագրութիւնները, ըլլայ հրդեհի, ըլլայ ծովային։ Այդ յօդուածը ներշնչուած է կա՛մ ագիտութենէ կամ չարամտութենէ, և եթէ պատերազմի պարագային ապահովագրական ընկերութիւնք կրնան իրենց յանձնառութիւնները մերժել առժամապէս, նոյնը կը պատահի նաև յաճախ սեղանաւորական գործառնութեանց մէջ, որովհետև պատերազմ մը և յաբակից յայտարարութիւններ սեղանաւորական տագնապ մը առաջ կը բերեն։

Տնօրէնը շարունակելով, բսաւ.— «Մենք և ուրիշ ամէն անգլիական ընկերութիւն, կարգադրեցինք ամէն պահանջում Հարաւ-Ափրիկեան պատերազմի միջոցին, մինչդեռ գերման թերթերն բամբիւ նայելով կրնանք եզեր մերժել մեր բոլոր յանձնառութիւնները։»

Սըն աշխարհահռչակ ընկերութեան ձնօրէնին այս յայտարարութիւնը կը հաստատուի Լոնտոնի բոլոր պատուաւոր և պարտաճանաչ ապահովագրական պաշտօնարաններէն։ Ամենքն ալ կը յայտարարեն թէ Գերմանացիին ըրած յայտնութեան մէջ բնաւ ճշմարտութիւն չկայ։ Ապահովագիրը դաշնագիր մըն է որուն հաւատարիմ կը մնան կնքողները, և պատերազմի ոև է դէպք պատրուակ մը չէ երբեք վճարումէ խուսափելու։

# ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

## ՀԱՇՏՈՒԹԻՒՆ

### ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԳՈՅԱՑԱՒ ԵՐԿՈՒ ԹՇՆԱՄԻՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ

ԲԱՐԻԶ, 29 Օգոստոս.— Զրոյց կայ թէ հաշտութիւնը կնքուեցաւ հետևեալ պայմաններով։

Ռուսիա $1^1/_2$ միլիառ ֆր. պատերազմական տուգանք պիտի վճարէ Ճափոնի։

Ռուսիա 500 միլիոն ֆր. հատուցում պիտի ընէ Ճափոն գտնուած Ռուս գերիներուն համար։

Ռուսիա Ճափոնի կը թողու Սագալինը։

ԼՈՆՏՈՆ.— Սէնդրըլ Նիւզ, Լաֆան և Էքսչէնչ Թէլէկրաֆ հեռագիր ստացան թէ հաշտութիւնը կնքուեցաւ։

ԲԵՏԵՐՍԲՈՒՐԿ.— Բորթսմութէն կը հեռագրեն «Սլովօ»ի թէ Մ. Վիթթէ յայտարարեր է որ ամբողջ խնդիրը գրեթէ կարգադրուած է։ Նախաշաւիղ պայմանները ստորագրուած են և թէ հաշտութիւնը կնքուած է։

ՆԻՒ-ԵՈՐՔ.— Բորթսմութէն կը հեռագրեն թէ Քոմուրա այսօր ստացաւ Թօքիոյէն սպասած հրահանգները, որոնք պատերազմական տուգանքի կամ ծախուքի խնդրին կը վերաբերին։

— Ռուսաճափոնցի պատուիրակները կատարելապէս համաձայնեցան։ Ա՛լ որոշուած է հաշտութիւն կնքել։

ԲՈՐԹՍՄՈՒԹ (Պաշտօնական).— Հաշտութեան ժողովին այս օրուան նիստին մէջ կատարեալ համաձայնութեան եկան երկու պատերազմիկ տէրութեանց պատուիրակները։ Ամէն պայմաններու վրայ համաձայնութիւն գոյացած ըլլալով, որոշուեցաւ հաշտութեան պայմանագիրը պատրաստել։ Ժողովը, առոր վրայ, որոշեց նիստը յետաձգել կէս օրէ ետք, ժամը 3 ու կէսին։

—Ճափոն տեղի տուաւ գրեթէ բոլոր կէտերուն վրայ։ Ընդունեց Ռուսիոյ այն յայտարարութիւնը թէ պատերազմական տուգանք չպիտի վճարէ. նոյնպէս տեղի տուաւ իր այն պահանջումին վրայ թէ չէզոք նաւահանգիստներ ապաստանած ռուս մարտանաւերը Ճափոնի յանձնուին, և Մ. Սրեւելքի մէջ ապագայ ռուս մարտանաւերու թիւը սահմանափակուի։ Համաձայնաբար, այսօր կէս օրէ վերջ գումարուելիք նիստին մէջ պիտի որոշուի զինադադար կնքել։ Ռուս և Ճափոնցի պատուիրակները խնդրեցին իրենց վեհապետներէն որ անմիջապէս զինադադար կնքուի։ Մ. Վիթթէ տեսակցութեան մը մէջ յայտարարեց թէ շատ գոհ է ձեռք բերուած մեծ յաջողութեան վրայ, որ անակնկալ մը եղաւ իրեն համար։ Ըսաւ թէ առաջ վերջնագիր մը յանձնեց Ճափոնցիներուն, զոր ընդունեցին։ Ասիկա մեծ յաջողութիւն մըն է Ռուսիոյ համար։ Մ. Վիթթէ յետոյ ըսաւ թէ Ճափոնցիք ի՛նչ զիջողութիւններ ըրին Ռուսաց փափաքին վրայ, և ըսաւ թէ Զարին հրամանովը լոկ Սագալինի հա-

[…]

իր փաստաքանին ըրած միջամտութեան վրայ։

ՎԱՐՇԱՒԻԱ.— Ընդհ. կառավարիչ Մ. Մաքսիմովիչ հանգստեան կոչուեցաւ։

ՍՈՒԻՆՄՈՒՏԷ.— Գերման ծովակալ Բէօտըէր հացկերոյթ մը տուաւ ի պատիւ Մանշի անգլիական նաւաբաժնին սպաներուն։

# ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԷՆ

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

Վաղը Ուրբաթ, ամսոյս 19, Օգոստափառ Կայսեր Գահակալութեան տարեդարձն ըլլալով, նոյն օրն մասնաւոր հանդիսաւորութեամբ բարեմաղթութիւնք տեղի պիտի ունենան Մայր Եկեղեցւոյ մէջ, վասն արևշատութեան և թանկագին կենաց Նորին Կայսերական Վեհափառութեան։

Հետևաբար յատկապէս կը հրաւիրուին մայրաքաղաքիս Սրբազան Եպիսկոպոսունք, Ս. Եկեղեցեաց Քահանայք, Վարդապետք և Աւագերիցունք և Քահանայք; ազգային անդամք և Վարչական Ժողովոց և Ցեառչ ու Թաղական Խորհրդոց և Հոգաբարձութեանց անդամք նոյն օրն, ժամ ճիշդ 2ին ներկայ գտնուիլ ի Պատրիարքարան, իբր հրաւիրագիր նկատելով ներկայ յայտարարութիւնս։

(Կնիք)

## ԼՈՒՑԿԻ Ի ՆՊԱՍՏ ԶԻՒԱՆԴԱՆՈՑԻ

Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը ի նպաստ հաստատութեան լուցկի վաճառելու արտօնութիւն ստացած ըլլալով, վաղուընէ սկսեալ հրապարակ պիտի հանէ զանոնք։ Վաճառման կեդրոնատեղին է Պոլիս Եէնի Ճամի փողոց Շիրին Խան, Մարտիկ էֆ. Շիրինեանի վաճառատունը։

ՎԱՐԴԱՎԱՌԻ երկուշաբթի առտուն Արաբկիրի Առաջն. փոխանորդ Տ. Կորիւն քհնյ. Երամեան քարոզի միջոցին անգամ մը ևս չեշտած է մեր Օգոստափառ Ինքնակալին անհուն բարիքներն ու հայրական հոգածութիւնները զորս կը վայելեն միշտ Ն. Կայս. Վեհափառութեան հաւատարիմ Հայ հպատակները։ Ճաշու գրքէն վերջ գոհաբանական աղօթքներ կարդացուած են վասն արևշատութեան և թանկագին կենաց Վեհ. Կայսեր, և ամբողջ ժողովուրդը մասնակցած է սրտաբուխ ամէններով։ Ցետ աւարտման եկեղեցւոյ, եկեղեցական դասը, ազգ. ժողովներու անդամները ու քաղաքին հայ երեւելիները իջած են առաջնորդարան, ուր դարձեալ փոխանորդ հայրը խօսք առնելով ջերմ մաղթանքներ ըրած է վասն կենաց Ն. Կայս. Վեհափառութեան, և ներկայք ձայնակցած են ամէններով։ Ցետոյ հրաւիրեալներուն օշարակ բաշխուած է։

[illegible]

# ՓԱՐԻԶԻ ՊՈՐՍԱՆ
BOURSE DE PARIS

30 Օգոստոս 1905

| | | |
|---|---|---|
| Ֆրանս. 3% | (3% Français | 99 85 |
| Ռէժի | (Tab. Turcs | 411 — |
| Օսմ. Միացեալ | (B. Ny Unif. | 92 05 |
| Երկաթուղի | (Lots Turcs | 132 — |
| Պանք Օթթ. | (Banque Ot. | 594 — |
| Թրանսվաալ | (Transvaal | 81 — |

# ՌԵՍՄԻ
## ԹԵՎՃԻՀԱԹ

Վագիֆէի մէմուրիյէթինի մուգտիմանէ խիֆա իթմէքտէ օլմասընտա մէպնի էվգաֆը Հիւմայուն մուվազէնէ չիւպէսի խիւլէֆաւըննտան Մահմուտ Զէքի պէյէ թէրֆիէն րիւթպէի Սանիյէ սընըֆը միւթէմայիզի թէվճիհ պույուրուլմուշ տըր։

# ՆԵՐՔԻՆ

[illegible]

Նախուրթեան առարկայ եղան։ Այսուամենայնիւ սակայն, ինչ որ ալ ըլլայ ազգ. վարժարանաց արդի վիճակը, պէտք է Արաբկիրցին քիչ մը աւելի լայն բանայ իր քսակը իր զաւկին կրթութեանն ու դաստիարակութեանը համար։

# Ի՞ՆՉՊԷՍ
## ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ Կ'ԸԼԼԱՅ ՄԱՐԴ

Եթէ արդի գպրոցականները ապէտ, անուս մնան, բան չսովրին, ապահովապէս իրե՛նք են իրենց դժբախտութեան պատճառ։

Մանկավարժութիւնը ու դաստիարակութեան նոր մէթոտը անթիւ դիւրութիւններ ընծեռած են ուսանողներուն որոնցմով ամէնէն գոյլ ու յետադէմ աղան իսկ կրնայ դիւրաւ սովրիլ աւանդուած առարկաները։

Այս խորհրդածութիւնները [illegible]

[illegible]

ոչ-բարեկեցիկ, պէտք է անմիջապէս գնէ Ինկլիզեան էֆ. ի Գծամարզարանէն մէյ մէկ օրինակ և զայն յանձնէ իր զաւկին ձեռք, որ առանց ուսուցչի և մօրն ու հօրը հսկողութեան տակ իսկ կրնայ վարժուիլ գեղագրութեան։ Այնքան դիւրուսոյց է մէթոտը ու պարզ։

ԳԾԱՄԱՐԶԱՐԱՆԻՆ

հատը կը ծախուի շատ աննշան գնով մը, 20 փր., Պապը Ալի Ճատտէսի, Կարապետ էֆ. Պէշիկեանի գրատունը։ Մեծաքանակ գնողներուն զեղչ։

Ճէզվէճեան ընտանիքը իր շնորհակալիքը կը յայտնէ ամէն անոնց որոնք ներկայ գտնուելով ՆՇԱՆ ԱՂԱ ՃԷՋՎԷՃԵԱՆԻ յուղարկաւորութեան, իրենց ցաւակցութիւնը յայտնեցին։

ԲԱՄՊԱԿ

Երկուշաբթի հեռագիր

Սրօթ 5.90

[illegible]

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

[illegible]

աւաշին անգամն է որ այսքան մեծ գումարի մը վրայ ապահովագրութիւն կը կնքուի, և Արհիգուքսին այս գործը իր բարի ազդեցութիւնը պիտի ունենայ ամէն դասակարգի հայերուն վրայ իրենց որդւոց ապագան ապահովելու համար։

# ԱԶԴ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Ուսումնարանին 17րդ Տարեշրջանը պիտի սկսի առաջիկայ 1/14 Սեպտեմբերին։

Ուսումնարանին ծնամակալութիւնը ծանուցած է արդէն, մասնաւոր յայտագրով մը, յարգոյ ծնողաց և պատուական ազգակիցներուն, անոր դիտակրթական ուղղութիւնը, նպատակը, ուսմանց ծրագիրն և ընտրեալ դասատուներուն անուններն և վստահ է որ անոնք լիուլի գաղափար կազմած են այս ուսումնական հաստատութեան վրայ և անոր ներքին արժէքը գնահատած։

Աշակերտաց արձանագրութեան համար ծնողք կրնան դիմել Ուսումնարանին Տնօրէնութեան, Բերա Եէշիլ փողոց, թիւ 1, ամէն Չորեքշաբթի և Ուրբաթ օրերը մինչեւ կէս օր։

Հին աշակերտաց արձանագրութիւնները տեղի պիտի ունենան Սեպտեմբեր 1էն մինչեւ 3. իսկ դասերը պիտի սկսին Սեպտեմբեր 5ի երկուշաբթի օրը։

Տնօրէնութիւն
Ս. ԳՐԻԳ. ԼՈՒՍ. ՈՒՍՈՒՄ.

Բերա, 15 օգոստոս 1905 10—1

ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ Կ'ՈՒԶՈՒԻ

Գումգաբուի Լուսաւորչեան Մայր վարժարանի համար կարող դաստիարակ-ուսուցչուհի մը կը փնտռուի, որ ունենայ տասնամեայ փորձառութիւն Գոհացուցիչ սմսաչան։ Դիմել Մայր վարժարանի Տեսչութեան։

# ԳԻՇԵՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐ

ԲՈՐԹՍՄՈՒԹ, 30 օգոստոս. — Հաշտութիւնը կնքուեցաւ։ Բացի պատուիրակներուն կողմէ արդէն իսկ ընդունուած պայմաններէն, վէճի առարկայ [illegible]

